ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 404-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝
Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի ապրիլի 26-ին տրված N 4 շինարարության թույլտվության մեջ, «1229.0» թիվը փոխարինել «1427.8» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. դեկտեմբերի 01
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 405-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,10.06.2008թ. <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված՝ 31.03.2016թ. /գրանցված է սեղանամատյանում N 585,գործ թիվ 59, և քաղաքացի Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի /մուտք՝ 23.11.2023թ. թիվ 681/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի /ծնված՝ 01.08.1967թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 2-րդ փողոց, թիվ 9 հասցեի 06-071-0026-0008 ծածկագրում գտնվող բնակելի տան և 0,163 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2 Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի /ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 06-071-0106-0027 ծածկագրում գտնվող 0,398 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
3. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 06-071-0126-0017 ծածկագրում գտնվող 0,157 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 06-071-0126-0134 ծածկագրում գտնվող 0,19 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
5. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 06-071-0126-0133 ծածկագրում գտնվող 0,3 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
6. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
7. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
8. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. դեկտեմբերի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 406-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 05.12.2022թ. թիվ 01/105.3.1/08941-2023 գրությունը՝ Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի բնակավայրերում 2024 թ.հունվարի 1-18-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:
2.Անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները Թումանյան համայնքի բնակավայրերում կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել հանձնաժողովներ հետևյալ կազմով.
1/ք.Թումանյան
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մոսինյան
-------//------- անդամներ՝ Ռ.Թորոսյան
-------//------- Ա.Գալստյան
-------//------- Է.Վարդանյան
-------//------- անասնաբույժ՝ Ս.Գալստյան
2/գ.Աթան
Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Քոչարյան
-------//------- անդամներ՝ Գ.Քոչարյան
-------//------- անասնաբույժ՝ Մ.Սարգսյան
3/գ.Ահնիձոր
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մաթևոսյան
-------//------- անդամներ՝ Հ.Մաթևոսյան
-------//------- անասնաբույժ՝ Գ. Քառյան
4/գ.Դսեղ
Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Հովսեփյան
-------//------- անդամներ՝ Մ.Եգանյան
-------//------- անդամներ՝ Մ.Հախվերդյան
-------//------- անասնաբույժ՝ Վ.Թադևոսյան
5/գ.Լորուտ
Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Սարգսյան
-------//------- անդամներ՝ Ա.Գասպարյան
-------//------- անասնաբույժ՝ Լ.Այդինյան
6/գ.Մարց
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղազարյան
-------//------- անդամներ՝ Հ.Բաղալյան
-------//------- անասնաբույժ՝ Ս.Գալստյան
7/գ.Շամուտ
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Քոչարյան
-------//------- անդամներ՝ Ս.Քոչարյան
-------//------- անասնաբույժ՝ Մ.Սարգսյան

8/գ.Չկալով
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Մխիթարյան
-------//------- անդամներ՝ Ռ.Էվոյան
-------//------- անասնաբույժ՝ Վ.Թադևոսյան
9/գ.Քարինջ
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մկրտումյան
-------//------- անդամներ՝ Վ.Թորոսյան
-------//------- անասնաբույժ՝ Ս.Գալստյան

3.Ռ.Շաքարյանին՝ Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերի անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2024թ.հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության բաժին և ՀՀ վիճակագրական ծառայության կոմիտեի Լոռու մարզային գործակալություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. դեկտեմբերի 06
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 407-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐԹՈՒՐ ՎՐԵԺԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անչափահաս Արթուր Վրեժի Հակոբյանի ծնողները ամուսնալուծվել են 21.10.2014 թվականին,որից հետո երեխան և մայրը ապրել են տատիկի՝ Անահիտ Անտաշյանի հետ, և երեխայի խնամքով հիմնականում զբաղվել են տատիկն ու պապիկը: Արթուրի մայրը՝ Արմինե Մովսեսյանը մահացել է 20.08.2023 թվականին: Ըստ երեխայի տատիկի ու պապիկի բանավոր հայտարարության Արթուրի հոր մասին չունեն տեղեկություններ,ամուսնալուծվելուց հետո երբևէ չի հետաքրքրվել երեխայով, չի մասնակցել նրա խնամքին: Թումանյան համայնք, ք. Թումանյան, 5-րդ փողոց,շ.5,բնակարան 13 հասցեի բնակչուհի՝ Անահիտ Սոսիի Անտաշյանը դիմել է Թումանյան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին, իր թոռան՝ Արթուր Վրեժի Հակոբյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու խնդրանքով: Հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության պետի առաջին տեղակալ՝ Ա.Չիլինգարյանի 23.11.2023թ. N03/ՄՄ/62256-23 գրությունը, Միասնական սոցիալական ծառայության Թումանյանի տարածքային կենտրոնի տնօրեն՝ Տ.Մխիթարյանի 22.11.2023թ. N 355 եզրակացությունը, Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 06.12.2023թ. նիստի որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ Որոշում եմ.

1.Անչափահաս Արթուր Վրեժի Հակոբյանի /ծնված՝ 14.09.2013թ. ծննդ. վկայական՝ III-ԲԳ N 532062/ նկատմամբ խնամակալ նշանակել չափահաս, գործունակ քաղաքացի՝ Անահիտ Սոսիի Անտաշյանին /անձնագիր՝ AV 0677740, տրված 16.03.2023թ., 055-ի կողմից/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. դեկտեմբերի 06
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 408-Ա

ԱՀՆԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՆԺԻԿ ՎԱՆՈՅԻ ՄԱՂԱՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ (ՕԳՆԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի <<Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի>> 2023թ. դեկկտեմբերի 06-ի նիստի որոշումը և Ահնիձոր գյուղի բնակչուհի Անժիկ Վանոյի Մաղաքյանի դիմումը՝

Որոշում եմ.

Ահնիձոր գյուղի բնակչուհի Անժիկ Վանոյի Մաղաքյանի խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, իր համաձայնությամբ նրա նկատմամբ Վահրամ Վաղինակի Դավթյանին նշանակել օգնական (պատրոն):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. դեկտեմբերի 06
ք.Թումանյան